Հանրության իրազեկում

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. ապրիլի 18-ին ժամը 15:00-ին Մեղրի համայնքի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումները:
Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), Մեղրու համայնքապետարանի և նախաձեռնողի (առկայության դեպքում) պաշտոնական կայքերում:
Տեղեկատվություն ստանալու և առաջարկություններ ներկայացնելու համար դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին (հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3), էլ.փոստ՝ envexpertise@env.am), հեռ. 011 220 218:

Կից՝

Ծանուցման հրապարակման հղումը

http://env.am/announcement/public-reviews/arevik-park-03